ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

ՀԱՆԴԷՍՆԵՐԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(Սեփական հեռագիրներ)

—

Էջմիածին, 14 հոկտեմբերի

Ուրբաթ օրը զանազան վայրերից հաւաքուել էր մօտ 150 պատգամաւոր։ Երեկոյեան կաթողիկոսը ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ հանդիսաւորապէս իջաւ Մայր Տաճար։

Ժամերգութիւնից յետոյ տեղի ունեցաւ պատգամաւորների խորհրդակցութիւն դպրոցական ֆոնդի մասին։ Որոշեց, որ հասարակութիւնը մասնակցէ ֆոնդի գործադրութեան կազմակերպութեանը։ Քննեցին դպրոցական խնդիրներ։

—

Էջմիածին, 14 հոկտեմբերի

Շաբաթ օրը տեղի ունեցաւ հանդիսաւոր Թափոր Էջմիածնից Օշական, կաթողիկոսի, վանքի միաբանութեան, ճեմարանի աշակերտութեան և ուսուցչութեան, պատգամաւորների և խուռն բազմութեան մասնակցութեամբ։ Տպաւորութիւնը վեհ էր։

Օշականի եկեղեցում տեղի ունեցած պատարագից յետոյ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեց ս. Մեսրովբի գերեզմանի վրայ, որով բացուեցան հանդէսները։ Տեղի ունեցան 30 շնորհաւորականներ։

Թափորը նոյն կարգով վերադարձաւ Էջմիածին, ուր տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ։ Շատ կենացներ խմուեցին։

Երեկոյեան բանախօսեց Կարապետ եպիսկոպոսը հայոց հին գրականութեան մասին։ Դահլիճը լի էր ունկնդիրներով։

Վանքի գաւիթը լուսավառուած է։ Նուագում է երաժշտութիւնը։ Մեծ ժողովուրդ է հաւաքուած։

—

Էջմիածին, 14 հոկտեմբերի

Կիրակի առաւօտեան տեղի ունեցաւ մեծ տօնի առթիւ զանազան վայրերից Էջմիածին հաւաքուած պատգամաւորների խորհրդակցութիւն դպրոցական խնդիրների առթիւ։ Ընդունեց կատարելապէս աջող մի որոշում։

Մայր տաճարում մատուցուած հանդիսաւոր պատարագից յետոյ մաղթանք կատարուեց կաթողիկոսի և ամբողջ միաբանութեան մասնակցութեամբ։ Այնուհետև ճեմարանում տեղի ունեցաւ գրական-երաժշտական ցերեկոյթ մեծ տօնին նուիրուած։ Կաթողիկոսն ընդունեց պատգամաւորների շնորհաւորանքները, որից յետոյ տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ կաթողիկոսի ներկայութեամբ։ Առաջարկուեցան Թագաւոր Կայսրի, Տէր Փոխարքայի, Կաթողիկոսի և այլ կենացներ և կարդացուեցին ստացուած շնորհաւորական հեռագիրները։

Կաթողիկոսն ընդունեց Թիֆլիսի պատգամաւորներին։

Գարեգին վարդապետը բանախօսեց հայ գրի մասին։

Վանքը և ճեմարանը լուսավառուած էին։ Նուագում էր երաժշտութիւնը։

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Շաբաթ, հոկտեմբերի 12-ին, երեկոյեան ժամը $8^1/_2$-ին Թիֆլիսի ժողովարանում տեղի ունեցաւ յոբելեանական հանդէս։ Դահլիճը համարեա լիքն էր։ Ներկայ էին նոյնպէս Թեմիս առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսն ու Աշոտ եպիսկոպոսը։

Հանդէսը բացուեց յատկապէս յոբելեանի առթիւ գրուած և ձայնագրուած մի երգով, որ երգեց Մ. Միրզոյեանի ղեկավարութեամբ քառաձայն երկսեռ խումբը։ Երգից յետոյ հայ գրերի գիւտի մասին դասախօսեց պ. Դ. Իփէկեանը. Նախքան գրերի գիւտին անցնելը, նա մի փոքրիկ ակնարկ գցեց 4-րդ դարի հայ քաղաքական կեանքի վրայ։ Հայաստանը որպէս քաղաքական ոյժ, բոլորովին թուլացել էր. Նա կուախնձոր էր դարձել Պարսկաստանի և Յունաստանի միջև։ Հայ նախարարները իրարից պառակտած էին, իսկ աշխարհական և հոգևոր իշխանութիւնները ուժգին պայքարի մէջ էին իշխանութիւնը իրենց ձեռքում պահելու համար։ Քրիստոնէութիւնը ժողովրդի բոլոր խաւերում արմատացած չէր տակաւին. դեռ ևս պահպանւում էին հեթանոսական սովորութիւնները։ Եւ ահա Մեսրոպը Վռամշապուհի և Սահակի աջակցութեամբ գտնում է հայ տառեր՝ ժողովրդին մայրենի լեզւով քրիստոնէութիւն ուսուցանելու։ Գրի շնորհիւ հայ ժողովուրդը ամրապնդուեց իր քրիստոնէական հաւատքի մէջ, գիտակցեց իր ազգային շահերը։ Գրի շնորհիւ էր, որ հայը պահպանեց իր գոյութիւնը, չը ձուլուեց աւելի ուժեղ ազգութիւնների հետ և այժմ դասւում է կուլտուրական ժողովուրդների շարքը»։

Իփէկեանից յետոյ դերասան Վ. Փափազեան կարդաց Կորիւն վարդապետի գրքից այն կտորը, որտեղ նկարագրուած են Մեսրոպի յղացումները։

Փափազեանից յետոյ մեր դպրոցական կեանքի մասին խօսեց Թեմական տեսուչ պ. Տէր-Միրաքեանը։ Նա մի քանի խօսք ասաւ հայ դպրոցի անցեալի մասին, և թէ ինչպէս աստիճանաբար հայերի մէջ խալիֆայական դպրոցները տեղի տւին եւրոպական տիպի դպրոցներին։ Ապա տալով մի քանի վիճակագրական տեղեկութիւններ Կովկասի դպրոցների մասին, գտաւ, որ ժողովուրդը խարխափում է տգիտութեան մէջ, որ անհրաժեշտ է աշխատել ժողովրդի լուսաւորութեան համար և կանոնաւոր հիմքերի վրայ դնել դպրոցական գործը։

15 րոպէ ընդմիջումից յետոյ դերասանուհի տիկ. Սիրանոյշը կարդաց «Տիկնայք փափկասունք», Վ. Փափազեանը տաճկահայ լեզւով արտասանեց մի արձակ բանաստեղծութիւն։ Հանդիսականները բուռն ծափահարութիւններով վարձատրեցին դերասաններին։

Դրանից յետոյ Ստ. Լիսիցեան խօսեց հայ տպագրութեան սկզբնաւորութեան մասին։ Մոգական լապտերով ցոյց տւեց առաջին հայ տպագրիչների և գրքերի պատկերներ։ Հայ տպագրութիւնը, որ սկիզբ առաւ օտար երկրներում, աստիճանաբար զարգանալով հաստատուեց և հայոց երկրում և այդպիսով ժողովրդի սեփականութիւն դարձնելով հայ գիրը, նպաստեց նրա լուսաւորութեանը։

Լիսիցեանից յետոյ Ն. Աղբալեան ամփոփ կերպով տւաւ հայ գրականութեան ընդհանուր պատկերը սկզբից մինչև մեր օրերը։ Հայ գրականութիւնը կարելի է բաժանել երկու շրջանի, ա. շրջանի մէջ որը հասնում է մինչև 1300 թ., գրականութեան ամենածաղկած ժամանակը ոսկեդարն էր, երբ նրա գործը կենդանի էր, հայ լեզուն հարուստ և պայծառ։ Յետագայում գրականութիւնը դադարում է կենդանի գործ լինելուց և դառնում է նեղ վանական-կրօնական աշխարհահայեացքով։ Բ-րդ շրջանում, որ հասնում է մինչև մեր օրերը, բարքերի վայրենացումով և համազգային կեանքի վորացումով գրականութիւնը համարեա մահւան է դատապարտւում։ Սակայն 18-րդ դարի սկզբներում սկսում են ծաղկել հայ գաղութները, իսկ Կովկասում Ռուսաստանի տիրապետութեամբ հայերը վերածնւում են քաղաքական և գրական կեանքով։ Ներկայումս մեր գրականութեան վիճակը անմխիթար է. իսկ գրականութեան և մեր լեզւի ծաղկման համար պէտք է աշխատել միահամուռ ուժերով որի համար նպաստաւոր պայմաններ, կան և կը լինեն։

Մէջ ընդ մէջ երգում էր քառաձայն խումբը. ակոմպանիմենտը պահում էր Մուրադեան։ Թէ դասախօսները և թէ երգերը արժանացան բուռն ծափահարութիւնների։ Հանդէսը վերջացաւ ժամը 12-ից անց.

—

Կիրակի հոկտեմբերի 13-ին տեղի ունեցաւ համազգային Մեծ Յոբելեանի հանդիսաւոր տօնախմբութիւնը։ Առաւօտեան վաղ սկսեցին ղօղանջել Վանքի աւագ եկեղեցու զանգերը։ Ժողովուրդը քաղաքի զանազան կողմերից սկսեց դիմել դէպի եկեղեցին։ Վանքի բակի մուտքն ու առաջնորդարանի աստիճանները զարդարուած էին դրօշակներով. Վանքի դրանը և փողոցում ոստիկանութիւնը կարգ էր պահպանում և խռնումից խուսափելու համար մէկ-մէկ էր ներս թողնում ժողովրդին։ Ժամը 10-ին սկսուեց պատարագը. պատարագիչն էր Մեսրոպ եպիսկոպոսը։ Երգում էր Ներսիսեան, Յովնանեան և Գայեանեան դպրոցների աշակերտ-աշակերտուհիներից կազմուած քառաձայն խումբը Վ. Զիլխաչեանի ղեկավարութեամբ։ Պատարագին ներկայ էր մայրապետ Թայիրեանը 8 կոյսերով։ Պատարագը վերջացաւ մօտ ժամը 12-ին։ Բենիկ վարդապետը քարոզ խօսեց կրօնի և և գրերի նշանակութեան մասին։

Ամբողջ պատարագի ժամանակ մի քանի հազար հոգուց բաղկացած ժողովրդի խուռն բազմութիւնը սպասում էր բակում և փողոցում թափորի սկսւելուն։

Պատարագից յետոյ մաղթանք կատարուեց Վանքի բակում, որից յետոյ ժամը մօտ $12^1/_2$-ին սկսուեց հանդիսաւոր թափորը դէպի Ներսիսեան դպրոցը, մասնակցութեամբ Թիֆլիսի հայ հասարակական և կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչների, հոգևորականութեան, դպրոցների հոգաբարձութիւնների, ուսուցչական կազմերի և դպրոցների բարձր դասարանների աշակերտութեան։

Թափորի առաջից գնում էին Թիֆլիսի արհեստաւորների աւագները համքարական դրօշակներով, որոնք մի առանձին շուք էին տալիս թափորին։ Բոլոր դրօշակակիրները հայկական միատեսակ հագուստ էին կրում։ Յետոյ գնում էր երգեցիկ խումբը, որին հետեւում էին կոյսերն ու հոգևորականութիւնը հանդերձաւորուած, ապա ամպհովանու տակ Թեմի առաջնորդ Մեսրովբ եպիսկոպոսը զգեստաւորուած Աշոտ եպիսկոպոսի և Բենիկ վարդապետի ուղեկցութեամբ։

Թափորը անցնելով Մեծ Վանքի փողոցով, Վորոնցովի արձանի մօտով և Չերքեզեան փողոցով դիմեց դէպի Ներսիսեան դպրոց։ Երկսեռ ժողովրդի հսկայական բազմութիւն անհագին տարածութեամբ հետեւում էր թափորին։ Խռնուած ժողովրդի մէջ ոստիկանութիւնը շղթայ կազմելով հազիւ էր կարողանում կարգ պահանել. մի քանի կանայք և տղաներ ոտի տակ ընկան։ Տրամւայի վագոնների երթեւեկութիւնը թափորի անցած փողոցներում կանգ էր առել։ Տների պատուհաններն ու պատշգամբները լցուած էին հանդիսատեսներով։

Թափորը մօտ ժամը մէկին հասաւ Ներսիսեան դպրոց։ Ցանկապատի մուտքին ծաղիկներով ու ոստերով յաղթական կամար էր շինուած, որի վրայ ոստերից հիւսուած էին «1500—400» թւերը։ Շէնքի չորս բոլորը ցանկապատի վրայ փողփողում էին հարիւրաւոր դրօշակներ։ Համքարութիւնների դրօշակակիրները շէնքի մուտքի մօտ երկշար շղթայ կազմեցին, որի միջով հանդիսաւոր թափորը ներս մտաւ շէնքը։ Հազարաւոր երկսեռ բազմութիւնը շրջապատեց շէնքը։ Այնուհետև կառքերով և աւտոմոբիլներով սկսեցին գալ հրաւիրուած կառավարչական, հասարակական և կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչները։ Ներս էին թողնւում միայն հրաւիրուածները։

Հանդէսը դպրոցի դահլիճում սկսուեց ժամը 2-ին։ Պատուաւոր հիւրերի թւում ներկայ էին Փոխարքայի օգնականներ՝ գեն.-լէյտ. Շատիլով ամուսնու հետ և սենատոր Վատացի, ոստիկանապետ գեն.-մայոր Զասիպկին։ Թիֆլիսի վրաց ազնւականութեան պարագլուխ իշխ. Աբխազին, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսեան, հայ-կաթոլիկների ներկայացուցիչ հ. Դիոնիսիոս վրդ., սիւննիների մուֆթին, և շիաների շէյխ-ուլ-իսլամը, հրէաների ռաբբին և այլն։

Հանդէսը բացեց Թեմակալ առաջնորդ Մեսրովբ եպիսկոպոսը մի ընդարձակ ճառով։

Այս ճառը և առհասարակ դպրոցում տեղի ունեցած հանդէսի ընդարձակ նկարագիրը կտանք հետեւեալ համարում։

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

—

Լօզան, 12/26 հոկտեմբերի

Լօզանի հայութիւնը տօնելով մեր պատմութեան մեծ դարագլուխ հանդիսացող զոյգ դէպքերի յոբելեանը, միացնում է իր սրտագին հրճւանքն ու ցնծութիւնը ամբողջ հայութեան զգացմունքներին։

Միաժամանակ ցանկալի է համարում, որ քաղաքակրթութեան այդ երկու մեծագոյն ազդակների տարեդարձը վերածւի ազգային տօնի և հանդիսաւորապէս տօնուի ամեն տարի համայն հայութեան կողմից։

—

Բաքու, 13 հոկտեմբերի

Կովկասեան հայ համերկրացիութիւնը, մեծ ուրախութեան զգացումով տօնելով համազգային և կուլտուրական տօնը, միանում է համայն հայ ժողովրդի ձայնին։

—

Պետերբուրգ, 13 հոկտեմբ.

Գիւղատնտեսականի հայ ուսանողների գրական գիտական խմբակցութիւնը, ցուրտ հիւսիսից իր ջերմ շնորհաւորանքներն է ուղարկում հայ ազգի մեծ տօների առթիւ։

Վարչութիւն

—

Սարատով, 13 հոկտեմբ.

Հայրենիքից անջատուած, մեր ողջոյնն ենք ուղարկում համազգային մեծ տօնին։

Հաֆթեանի հասարակութեան երիտասարդութիւն։

—

Գորիս, 13 հոկտեմբերի

Գորիսի ուսուցիչներն ու երիտասարդութիւնը տօնում են հանդիսաւորապէս հայ գիտութեան ստեղծագործութեան յոբելեանը։ Կեցցէ մայրենի գրականութիւնն ու հայ ժողովուրդը։

Խանլարեան, Մենտոր, Արզումանեան, Արօ։

—

Իգդիր, 13 հոկտեմբ.

Խորին երախտագիտութեամբ ողջունում եմ մեր ազգային մեծ յոբելեանը. Ջերմագին բարգաւաճում մաղթելով հայ մտքին ու գրականութեանը։

Ենոք Փարինջեան

—

Էջմիածնի յոբելեանական յանձնախմբին ուղարկուած է հետեւեալ հեռագիրը.

«Եւրոպա անցնելու պահուս ստանալով Կարնոյ ազգային իշխանութեանց առաջարկը զիրենք ներկայացնելու Մեծ Յոբելեանին Էջմիածնի մէջ, խորապէս կը ցաւիմ, որ հնարաւորութիւն չունիմ անձամբ մասնակցելու ազգային մեծ հանդէսին։ Յանուն Բարձր Հայքի ողջունելով ձեզ ամենքդ, սրտագինս կը մաղթեմ, որ Մեծ Յոբելեանները խթան մը ծառայեն վերջապէս խորհող, հեռատես և ձեռնհաս բոլոր հայերուն՝ որպէսզի՝ խելամուտ հայ իրականութեան պահանջներուն, լոյսի և գիտակցութեան ջահակիրներ հանդիսանան հայ տառապող զանգուածներու մթին խաւերուն մէջ, և ջանային կենդանի գործով և զոհողութիւններով շարունակել այն մեծ ազգային գործը, որուն հիմը դրին, ազգային կեանքի դառն օրերուն մէջ, մեր մեծ հայրերը V և XVI դարերուն»։

Ա. Վռամեան

ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

«Հորիզոն»-ի խմբագրատանը յոբելեանի առթիւ ստացուել են հետեւեալ հեռագիրները.

Արշակ Ղազարեանի անունով Կիևից. «Մի խումբ հայ ուսանողներ խնդրում են Ձեզ մեր կողմից ներկայացուցիչ լինել տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանական տօնախմբութիւններին Թիֆլիսում»։

—

Արշակ Ջամալեանի անունով Արդւինից.—«Հրատարակչական ընկ. բաժանմունքը խնդրում է Ձեզ յոբելեանական հանդէսներին շնորհաւորել մեծ յոբելեանը։ Վարչութիւն»։

—

Հայ Գրողների ընկ. վարչ. անունով Բաքւից. «Շնորհաւորելով Մեծ Յոբելեանը, խնդրում եմ ընդունել գրական ֆոնդի մէջ իմ լուման—Տոլստոյի իմ թարգմանած «Յարութիւն» գրքից 100 օրինակ։ Տիգրան Յովհաննիսեան»։

—

Հոկտեմբերի 13-ին հայ դրամատիք. խմբակցութիւնը յոբելեանի առթիւ ներկայացրեց Գ. Զուբարի «Սանդուխտ» պատմական պիէսը։ Ներկայացումից առաջ Բենիկ վարդ. ատենախօսեց։

—

Սուխումի շրջանի քահանաները հեռագրել են Թեմական տեսուչ պ. Յ. Տէր-Միրաքեանին՝ ներկայ լինել Թիֆլիսում կատարւող յոբելեանական հանդէսին և շնորհաւորել Թեմական առաջնորդին։

—

«Թեմի» շաբաթաթերթը իր կիրակի օրւայ համարում (№ 145) տպել է մի առաջնորդող յօդւած հայոց գրերի 1500 և տպագրութեան 400-ամեայ յոբելեանի մասին։ Այդ կրկնակի տօների նշանակութիւնը բացատրելուց յետոյ, շաբաթաթերթն իր գրւածքը աւարտում է հետեւեալ խօսքերով.

«Մեզ վրացիներիս էլ եղբայրական պարտականութիւնը թելադրում է ողջունելու մեր եղբայրակից ու դրացի ժողովրդին՝ նրա ազգային այդ հոյակապ տօնի պատճառով և ցանկալու նրան կատարեալ յաջողութիւն»։

Նոյն յոբելեանի նշանակութիւնը բացատրած ունի նաև «Սախալխո Գազէթի» լրագիրը իր 1014 №-ում։

Հոկտեմբերի 12-ից Հայոց Ազգագրական ընկերութեան շէնքում բացուած է համազգային Մեծ Տօնի առթիւ յիշեալ ընկերութեան ձեռներէցութեամբ սարքուած հայ պարբերական մամուլի և տպագրութեան ցուցահանդէսը։

—

Համազգային մեծ տօնի առթիւ Թիֆլիսի քաղաքային վարչութեան հայ ծառայողները շաբաթ օրը արձակուած էին պարապմունքներից։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

—

Քիշնև, 13 հոկտեմբերի

Սկսել են Բեսարաբիայի հայերի տօնական հանդէսները հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի լրացման առթիւ։ Քիշնեւի հայ արքեպիսկոպոս Ներսէսը հարիւր հազար ռուբլի յատկացրեց յօգուտ այն ֆոնդի, որը սահմանուած է ի յաւերժացումն ժամանանշած յոբելեանի։ (Գ. Հ. Գ.)